ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2022 թվականի N 1224 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 355-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի Էկոնոմիկայի նախարարության բաժնի 2.1-ին, 2.2-րդ կետերը և 2.3-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման միջոցառումը հաստատելու մասին» N 355-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «հավելվածի» բառը փոխարինել «N 1 հավելվածի» բառերով, ինչպես նաև որոշմամբ հաստատված հավելվածում «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N 1» բառերով և հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ».

2) որոշումը լրացնել նոր՝ N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի.

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով.

«3. Հաստատել բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառումը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Սույն որոշման 3-րդ կետով հաստատված միջոցառումների իրականացումը վերապահել «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին կամ դրա իրավահաջորդին:

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կամ դրա իրավահաջորդի հետ կնքել սույն որոշման 3-րդ կետով հաստատված միջոցառումների իրականացման վերաբերյալ պայմանագիր:».

4) որոշման հավելվածում՝

ա. նախագծի N 1 հավելվածում «սարքեր, սարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասեր» արտահայտությունը բոլոր հոլովաձևերով փոխարինել «մեքենա-սարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասեր» արտահայտությամբ,

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն միջոցառման իմաստով տնտեսավարող է համարվում Հայաստանի Հանրապետության կամ Լեռնային Ղարաբաղի տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող մասնավոր առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որն ապահովում է ստորև թվարկված բոլոր չափանիշներին համապատասխանությունը.»,

գ. 5-րդ կետի 1-ին ենթակետը «պայմանագիրը» բառից առաջ լրացնել «գնորդի և մատակարարի միջև» բառերով,

դ. 6-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) արժույթը՝ դրամով կամ արտարժույթով.»,

ե. 6-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) դրամով և արտարժույթով վարկի/լիզինգի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 6 ամիս.»,

զ. 6-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) վարկի/լիզինգի տրամադրման և սպասարկման ընթացքում միջ-նորդավճարներ, վաղաժամկետ մարման համար տույժեր/տուգանքներ կամ այլ վճարներ չեն կիրառվում.»,

է. 6-րդ կետի 9-րդ ենթակետում «սարքերի, սարքավորումների և դրանց բաղ-կացուցիչ մասերի լիզինգի/վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հաշվարկումը» բառերը փոխարինել «մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման հաշվարկումը» բառերով,

ը. 6-րդ կետի 9-րդ ենթակետի «ա», «բ», «գ» պարբերություններից հանել «/» կետադրական նշանը, «վարկ» և «վարկառու» բառերը բոլոր հոլովաձևերով,

թ. 6-րդ կետի 9-րդ ենթակետի «ա», «բ», «գ» պարբերություններում «սարքերի, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի» բառերը փոխարինել «մեքենա-սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի» բառերով,

ժ. 6-րդ կետի 9-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» և «ե» պարբերություններով.

«դ. վարկային պայմանագրի շրջանակներում մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերման համար վարկառուի կողմից որպես կանխավճար վճարված գումարի վրա կանխավճարի վճարման օրվանից մինչև վարկի առարկայի հանձնման-ընդունման ակտի ստորագրման (կամ մաքսային հայտարա-րագրի) ամսաթիվը հաշվարկվում է տոկոսադրույք (կամ դրան հավասարեցված վճար): Նշված տոկոսադրույքը (կամ դրան հավասարեցված վճարը) սուբսիդավորվում է մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո միանվագ՝ ծրագրով սահմանված ընթացակարգով և չի կարող գերազանցել վարկի պայմանագրով սահմանված տարեկան տոկոսա-դրույքը: Ընդ որում, մատակարարման փուլի սուբսիդավորումը կատարվում է մինչև 180 օր ժամկետի համար՝ սկսած վարկի պայմանագրի կնքման օրվանից, իսկ 180

օր ժամկետը գերազանցող օրերի համար տոկոսների վճարման պարտականությունը կրում է վարկառուն,

ե. մեքենասարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը չմատակարարվելու դեպքում սույն ենթակետի «դ» պարբերությունում նշված տոկոսագումարը ենթակա չէ սուբսիդավորման, իսկ տոկոսագումարի վճարման պարտականությունը կրում է վարկառուն:».

ժա. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին կետով.

«8.1. Սույն հավելվածի 6-րդ կետի 9-րդ ենթակետի «ա» և «դ» պարբերություններով նախատեսված հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո վարկի/լիզինգի սուբսիդավորումն իրականացվում է սույն հավելվածի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափերով, վարկի/լիզինգի մարման ժամկետի՝ սույն հավելվածի 6-րդ կետում նշված ժամանակահատվածի համար:»,

ժբ. 13-րդ կետում «Մեծ Քառյակ» արտահայտությունը փոխարինել «500 մլն դրամ և ավելի շրջանառություն ունեցող» արտահայտությամբ,

ժգ. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Սույն միջոցառման իմաստով նպատակային է համարվում այն վարկ/լիզինգը, որը տրամադրվել է ստորև աղյուսակում ներկայացված Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների և որոշման 5-րդ կետով սահմանված օգտագործման նպատակների համադրությամբ՝

Գործունեության նպատակ	Օգտագործման նպատակ
C (ՍԻ) «ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում
B (ԲԻ) «ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» (բացառությամբ 7-րդ հատվածի)	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում
J (ՋԵՅ) «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում
F (ԷՖ) «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում

Հ (ԷՅՋ) «ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում
Մ (ԷՄ) «ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱ-ԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒ-ՆԵՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում
Բ (ՓԻ) «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում
Զ (ՔՅՈՒ) «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում

Ընդ որում, որոշման համատեքստում որպես տնտեսական գործունեության դասակարգիչ է դիտարկվում այն ոլորտային դասակարգիչը, որի համար շահառուն դիմում է ֆինանսավորման:»,

ժդ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին կետով.

«15.1. Սույն միջոցառման շրջանակներում վարկ է համարվում նաև փաստաթղթային ակրեդիտիվը, և փաստաթղթային ակրեդիտիվի միջոցով տրամադրվող ֆինանսավորումը ևս ենթակա է սուբսիդավորման՝ սույն միջոցառմամբ սահմանված վարկի պայմաններով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

05.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ